

**ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Արման ՏՈՆԻԿՅԱՆ
ՀՊՏՀ Բանկային գործի և
ապահովագրության ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. տնտեսական ակտիվություն, վարկային ներդրումներ,
տնտեսության ճյուղեր, տնտեսաչափական մոդել

Վերջին տարիներին ՀՀ Կառավարությունը տնտեսական քաղաքականությունը փորձում է իրականացնել ոչ թե տնտեսական աճի, այլ տնտեսական զարգացման հայեցակարգի հիման վրա, որի հաջող ելքն էլ կբնութագրվի տնտեսական աճով :

Տնտեսական աճը երկրի տնտեսության զարգացման ամփոփ բնութագրիչն է: Տնտեսական աճ ապահովող տնտեսությունն ավելի մեծ հնարավորություններ ունի նոր սոցիալական ծրագրեր իրականացնելու, աղքատության և շրջակա միջավայրի խնդիրները լուծելու ուղղությամբ: Այն գնահատվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) շարժով.

Աղյուսակ 1. Տնտեսական աճը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան 2010-2014թթ.¹

Գ/Գ	Ցուցանիշ	Չափի միավոր	Ցուցանիշի մեծությունը՝ ըստ տարիների					Հարաբերական շեղումը 2014 թվականին 2013 թվականի համեմատ (+/- %)
			2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	
1	Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)՝ շուկայական գներով	մլն ՀՀ դրամ	3,460,203	3,777,946	3,997,631	4,272,895	4,525,875	5.9
2	ՀՆԱ-ի աճի տեմպը	%	110.1	109.2	105.8	106.9	105.9	(0.9)
3	Տնտեսական աճի տեմպը		10.1	9.2	5.8	6.9	5.9	(14.0)

Աղյուսակ 1-ի տվյալների համաձայն՝ 2014 թվականին ՀՆԱ-ն, արտահայտված շուկայական գներով, նախորդ տարվա համեմատ ավելացել է 5.9%-ով, սակայն ՀՆԱ-ի աճի տեմպը նույն ժամանակազրական համեմատության մեջ նվազել է 0.9%-ով, ինչը նշանակում է, որ ռեսուրսներն արդյու-

¹ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Հրապարակումներ 2010-2014թթ.

նավետ չեն օգտագործվել և տնտեսական զարգացումը դանդաղել է, ինչի մասին էլ վկայում է հաշվետու տարում 14%-ով տնտեսական աճի տեմպի անկումը:

Տնտեսական զարգացման հայեցակարգի արդյունավետ կիրարկման պայմանը երկրի ֆինանսատնտեսական ներուժի՝ ներքին ռեսուրսների ազդեցատագումն է, որի առանցքում դիտվում է ֆինանսական համակարգը, մասնավորապես առևտրային բանկերի դերը: Հաջորդիվ ներկայացվում է ՀՀ առևտրային բանկերի ակտիվների կապը մակրոտնտեսական հիմնական ցուցանիշի՝ ՀՆԱ-ի հետ.

Աղյուսակ 2. ՀՀ առևտրային բանկերի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը 2010-2014թթ.

(%)

Տարիներ	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	Հաշվետու տարվա բացարձակ շեղումը նախորդ տարվա նկատմամբ (+,- %)	Հաշվետու տարվա հարաբերական շեղումը նախորդ տարվա նկատմամբ (+,- տոկոսային կետ)
Բանկային համակարգի ակտիվների հարաբերությունը ՀՆԱ-ին	45.1	54.7	61.8	68.7	75.4	6.6	9.7

Հնգամյա կտրվածքով ՀՀ առևտրային բանկերի ակտիվների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում աճել է. 2014 թվականի բանկային ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերական ցուցանիշի մեծությունը կազմել է 75.4%, ինչը նախորդ տարվա նկատմամբ մեծացել է 9.7 տոկոսային կետով: Հաշվի առնելով Աղյուսակ 3-ի և Աղյուսակ 2.3.3-ի տվյալները՝ կարելի է նշել, որ համամասնորեն կայուն աճի տեմպ է գրանցվել ինչպես բանկային ակտիվների, այնպես էլ ՀՆԱ-ի մեծության գծով՝ չնայած համեմատության կարգով ժամանակագրական շարքում ՀՆԱ-ի աճը զիջում է բանկերի ակտիվների մեծության աճին, ինչի արդյունքում էլ հաշվետու տարում դիտվում է 6.6%-ով բացարձակ շեղում նախորդ տարվա համեմատ:


ՀՀ Կառավարության կողմից վարվող տնտեսական քաղաքականությունը գնում է դեպի տնտեսության ֆինանսական և իրական հատվածների ինտեգրմանը՝ նպաստելով ֆինանսական միջնորդության չափի մեծացմանը: Խոսքը գնում է տնտեսության վարկավորման ծավալների մասին.

Աղյուսակ 3.33 առևտրային բանկերի կողմից տնտեսությունում ֆինանսական միջնորդության դինամիկան 2010-2014թթ.²

(%)

Տարիներ	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	Հաշվետու տարվա բացարձակ շեղումը նախորդ տարվա նկատմամբ (+,- %)	Հաշվետու տարվա հարաբերական շեղումը նախորդ տարվա նկատմամբ (+,- տոկոսային կետ)
Ֆինանսական միջնորդության ցուցանիշ	27.4	33.6	40.2	42.1	48.4	6.3	14.8

2014 թվականին ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի հարաբերությունը ՀՆԱ-ին կազմել է 48.4%՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 6.3%-ով կամ 14.8 տոկոսային կետով, ինչը վկայում է այն մասին, որ առևտրային բանկերի ընդհանուր վարկային պորտֆելը նույնպես մեծացել է.



Գծապատկեր 1. Առևտրային բանկերի վարկային պորտֆելը (մլն ՀՀ դրամ)

Ելնելով Գծապատկեր 1-ում ներկայացված թվային տվյալներից՝ հաշվարկի արդյունքում ստացվում է, որ բանկերի ընդհանուր վարկային պորտֆելի մեծությունը 2014 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ

² ՀՀ Կենտրոնական բանկ, Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն 2010-2014թթ.

21.7%-ով: Համեմատելով հաշվետու տարվա վերջին դրությամբ ՀՆԱ-ի և վարկային պորտֆելի հարաբերական շեղումները՝ պարզվում է, որ երկրի տնտեսության մեջ ֆինանսական միջնորդության աճն առավելապես պայմանավորված է էական վարկային ներդրումներով :

Երկրի տնտեսության ակտիվությունը գնահատելու համար բավական հետաքրքիր ինդիկատոր է վարկավորման ոլորտում բանկերի ակտիվությունը, քանի որ բանկային ոլորտը շատ զգայուն է ներքին և արտաքին ցանկացած տնտեսական փոփոխության նկատմամբ, հետևապես բանկերն ավելի արագ և ռացիոնալ են գնահատում շուկայական իրավիճակը : Այդուհանդերձ շատ տնտեսագետներ կարծում են, որ, օրինակ, 2008 թվականի «ֆինանսատնտեսական» մակդիրով բնորոշվող ճգնաժամը Հայաստանում դրսևորվեց որպես «տնտեսաֆինանսական» ձևով, քանի որ, ի տարբերություն երկրների, մեզ մոտ ճգնաժամի ազդեցությունն սկզբում նկատվեց տնտեսության իրական հատվածում, որից հետագայում քիչ թե շատ տուժեց ֆինանսական ոլորտը:

Հիմնվելով վարկավորման վիճակագրության վրա՝ հնարավոր է դիտարկել մակրոտնտեսական զարգացումը: Այդ առումով հաջորդիվ ներկայացվում է ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումների մեծությունը՝ ըստ տնտեսության հատվածների.

Աղյուսակ 4. ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի կազմն՝ ըստ տնտեսության հատվածների 2010-2014թթ.³

(մլն ՀՀ դրամ)

Վարկավորվող տնտեսության հատվածները	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	Հաշվետու տարվա բացարձակ շեղումը նախորդ տարվա նկատմամբ (+,- մլն ՀՀ դրամ)	Հաշվետու տարվա հարաբերական շեղումը նախորդ տարվա նկատմամբ (+,- %)
Ձեռնարկություններին	505,676	710,787	935,669	991,041	1,181,094	190,053	19.2
Տնային տնտեսություններին	369,172	478,702	561,906	668,670	812,194	143,524	21.5
Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	12,160	13,838	31,043	44,616	63,628	19,012	40.6
Այլ ֆինանսական կազմակերպություններին	18,487	23,293	31,238	39,376	34,461	(4,915)	(12.5)
Ընդամենը ռեզիդենտ տնտեսությանը	905,495	1,226,620	1,559,856	1,743,703	2,091,377	347,674	19.9

³ ՀՀ Կենտրոնական բանկ, Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն 2010-2014թթ.

Աղյուսակ 4-ի տվյալների համաձայն՝ 2014 թվականին ՀՀ առևտրային բանկերի կողմից վարկային ներդրումները տնտեսության բոլոր հատվածներում ավելացել են, բացի այլ ֆինանսական կազմակերպությունների գծով. վերջինիս մեծությունը 2013 թվականի համեմատ նվազել է 4,915 մլն ՀՀ դրամով կամ 12.5%-ով:

Տնտեսական ակտիվության գնահատման տեսանկյունից ուշագրավ է այն, որ հաշվետու տարում ամենաբարձր հարաբերական շեղումով աճել են շահույթ չհետապնդող կազմակերպություններին տրամադրված վարկերը՝ կազմելով 63,628 մլն ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ հարաբերական շեղումը կազմել շուրջ 40.6%), չնայած վարկային պորտֆելի կառուցվածքում գերակշռում են ձեռնարկությունների տրամադրված վարկերը, որոնք հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ ավելացել են 19.2%-ով՝ կազմելով 1,181,094 մլն ՀՀ դրամ:

Տնային տնտեսություններին տրամադրված վարկերի ծավալները նույնպես ավելացել են՝ կազմելով 812,194 մլն դրամ, ինչը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 21.5%-ով :

Կարևորություն տալով ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր վարկային պորտֆելի վերլուծությանը մակրոտնտեսական ցուցանիշների համատեքստում և հաշվի առնելով այն, որ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները բնութագրվում են տնտեսության տարբեր ճյուղերի արտադրանքի և/կամ ծառայության մեծություններով՝ դրամական արտահայտությամբ, նպատակահարմար է ներկայացնել նաև վարկային ներդրումները՝ ըստ տնտեսության ճյուղերի.

Վարկային պորտֆելի կազմը ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի ներկայացնող աղյուսակի տվյալների համաձայն՝ վարկավորման բոլոր ուղղություններում 2014 թվականին նախորդ տարիների համեմատ դիտվում է աճ, բացառություն է կազմում միայն տրանսպորտի և կապի ճյուղը, որի գծով վարկավորումը կրճատվել է 2.5%՝ կազմելով 44,295 մլն ՀՀ դրամ :

ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի կազմում իր մեծությամբ դիտարկվող ժամանակահատվածի վերջին երկու տարիների ընթացքում իր մեծությամբ առաջատար է սպառողական վարկերի հոդվածը. հաշվետու տարվա վերջի դրությամբ սպառողական վարկերը կազմել են 451,520 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 23.5%-ով : Սպառողական վարկերի ծավալային մեծությունը հասարակության սոցիալական վիճակի յուրահատուկ ինդիկատոր է. եթե ավելանում են սպառողական վարկերը, ենթա-

դրվում է, որ եկամուտների մասով վարկավորման պահանջները բավարարվում են :

Աղյուսակ 5. ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի կազմն՝ ըստ տնտեսության ճյուղերի 2010-2014թթ.⁴

(նլն ՀՀ դրամ)

Վարկավորման ուղղությունները	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	Հաշվետու տարվա բացարձակ շեղումը նախորդ տարվա նկատմամբ (+,- նլն ՀՀ դրամ)	Հաշվետու տարվա հարաբերական շեղումը նախորդ տարվա նկատմամբ (+,- %)
Արդյունաբերություն	203,844	268,570	373,535	364,971	429,094	64,122	17.6
Գյուղատնտեսություն	52,365	73,440	91,890	103,222	127,598	24,376	23.6
Շինարարություն	74,795	98,224	100,093	109,408	124,194	14,787	41.2
Տրանսպորտ և կապ	25,661	42,526	39,647	45,431	44,295	(1,135)	(2.5)
Առևտուր	184,821	275,720	320,981	352,324	386,268	33,944	9.6
Սպասարկման ոլորտ	40,464	57,215	85,995	91,800	133,730	41,930	45.7
Սպառողական վարկեր	163,711	217,377	295,486	365,592	451,520	85,928	23.5
Հիփոթեքային վարկեր	88,114	110,300	127,384	143,197	172,432	29,235	20.4
Այլ	52,119	54,601	81,031	108,297	141,071	32,773	30.3
Ընդամենը	885,893	1,197,973	1,516,043	1,684,243	2,010,202	325,959	19.4

Արդյունաբերության ճյուղում արձանագրված դրական շեղումը 2014 թվականին կազմել է 64,122 նլն ՀՀ դրամ, այսինքն՝ նախորդ տարվա համեմատ տվյալ ճյուղի վարկավորումն աճել է 17.6%, ով ինչը տնտեսության զարգացման տեսանկյունից շատ կարևոր է, եթե նկատի ունենանք, որ արդյունաբերության ճյուղում ֆինանսական միջնորդությունը սովորաբար արդարացված է լինում :

Տնտեսական կարևոր ցուցանիշներից մեկի՝ առևտրի վարկավորման գծով 2014 թվականին նույնպես զբաղեցվել է աճ 9.6%-ի չափով՝ կազմելով 386,268 նլն ՀՀ դրամ : Այս ցուցանիշը հիմնականում բնութագրում է մանրածախ և մեծածախ առևտրով զբաղվողների տնտեսական ակտիվությունը, ինչը վերջին տարիներին կայուն զարգանում է :

Ուսումնասիրվող ժամանակահատվածում աշխուժացում է դիտվում նաև հիփոթեքային շուկայում: Տարբեր միջազգային կազմակերպությունների

⁴ ՀՀ Կենտրոնական բանկ, Վիճակագրական տեղեկագրեր 2010-2014թթ.


ծրագրային միջոցներով, ինչպես նաև սեփական ռեսուրսներով ՀՀ առևտրային բանկերը տարեցտարի ավելացնում են հիփոթեքային վարկի պորտֆելը. հաշվետու տարվա վերջի դրությամբ հիփոթեքային վարկերի ծավալը կազմել է 172,432 մլն ՀՀ դրամ՝ 2013 թվականի նկատմամբ աճելով 20.4%-ով : Հիփոթեքային վարկերի տրամադրմամբ բանկերը նպաստում են երկարաժամկետ ֆինանսական հարաբերությունների ապահովմանը, շինարարության ճյուղի զարգացմանը և անշարժ գույքի շուկայի աշխուժացմանը՝ բավարարելով հաճախորդների պահանջները, որոնք էլ իրենց հերթին դրական ազդեցություն են թողնում տնտեսության զարգացման վրա :

Հայաստանի տնտեսության առանցքային ճյուղերից մեկում՝ շինարարության ոլորտում առևտրային բանկերը 2014 թվականին ներդրել են 124,194 մլն ՀՀ դրամի չափով վարկային ռեսուրսներ՝ ավելացնելով այն 41.2%-ով: Չնայած վարկավորման ծավալներին՝ այս ոլորտում էական ներդրումներ են կատարվում արտաքին աղբյուրներից, ինչը ենթադրում է, որ ոլորտում ֆինանսական միջնորդություն ռիսկային թե վարկառուների, թե բանկերի համար :

Դրական հարաբերական շեղման մեծությամբ՝ 45.7%, տնտեսության ճյուղերում առաջին տեղում է սպասարկման ոլորտը. այստեղ վարկային պորտֆելի մեծությունը հաշվետու տարում կազմել է 133,730 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 41,930 մլն ՀՀ դրամով :

Տնտեսության զարգացման հայեցակարգը մեծ կարևորություն է տալիս Հայաստանի գյուղատնտեսական ներուժի առավելագույն օգտագործմանը, ինչը կնպաստի նաև արտահանման ծավալների ավելացմանը : 2014 թվականին ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կատարվել են 127,598 մլն ՀՀ դրամի չափով վարկային ներդրումներ, որոնց մի մասը եղել է միջազգային ծրագրերի հաշվին, մնացածը բանկերի սեփական միջոցների հաշվին : Գյուղատնտեսական վարկային պորտֆելի աճը հաշվետու տարում նախորդի նկատմամբ կազմել է 23.6% : Չնայած տարիներ ընթացքում գյուղատնտեսության ոլորտում արձանագրված վարկային ներդրումների ավելացմանը՝ այնուամենայնիվ, բանկերը, ռիսկի տեսանկյունից, բավականին զգուշավոր են մոտենում ոլորտում ֆինանսական միջնորդություն ցուցաբերելու հարցին. Հայաստանում գյուղատնտեսությունը շարունակում է մնալ տնտեսության ամենառիսկային ճյուղը, որը կապված է ինչպես վարկառուների ֆինանսական հնարավորությունների հետ, այնպես էլ երկրի անբարենպաստ բնակլիմայական պայմանների հետ:

Հաջորդիվ գծապակերի տեսքով ներկայացվում է ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր վարկային ներդրումներում տնտեսության յուրաքանչյուր ճյուղի ունեցած մասնաբաժինը.



Գծապատկեր 2. ՀՀ բանկերի վարկային պորտֆելի կառուցվածքը

Ներկայացված գծապակերում ակնհայտ է, որ 2014 թվականին առևտրային բանկերի կողմից ներդրումները մեծապես կատարվել են սպառողական վարկավորման ուղղությամբ, որի մասնաբաժինը կազմել է 23% : Պորտֆելի մեծությամբ հաջորդը արդյունաբերության ճյուղն է՝ 21%, որին իր մասնաբաժնի մեծությամբ հաջորդում է առևտրի ճյուղի վարկավորումը՝ 19% :

Ըստ տնտեսության ճյուղերի՝ ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր վարկային պորտֆելի կառուցվածքում 2014 թվականի դրությամբ ամենափոքր մասնաբաժինը կազմում է տրանսպորտի և կապի ոլորտինը՝ 2% : Այդ ճյուղին նախորդում է գյուղատնտեսության վարկավորումը՝ 6%, շինարարության և սպասարկման ոլորտում կատարված ներդրումները՝ համապատասխանաբար 7% և հիփոթեքային վարկերի պորտֆելը՝ 9% մասնաբաժնով:

Վերլուծության առումով հատկանշական է նաև այն, որ վարկային պորտֆելի կառուցվածքում տնտեսության մի քանի ճյուղերի գծով 2014 թվականին նախորդ տարվա համեմատ գրանցվել է մասնաբաժնի կրճատում. օրինակ՝ արդյունաբերության և շինարարության ճյուղերի մասնաբաժինները 2014 թվականին նախորդ տարվա համեմատ փոքրացել են 0.3%-ի չափով,

տրանսպորտի և կապի ճյուղինը՝ 0.5%, իսկ ամենաշատը մասնաբաժնային կրճատումը դիտվում է առևտրի վարկավորման ճյուղում՝ 1.7% : Նույն ժամանակագրական համեմատությամբ մասնաբաժնի առավելագույն ավելացում արձանագրվել է սպասարկման ոլորտում՝ 1.2%, իսկ նվազագույն ավելացում հիփոթեքային վարկերի գծով՝ 0.1% :

Բացի տնտեսության կայունացման վարկավորման ծրագրից, ՀՀ առևտրային բանկերից շատերը ակտիվ մասնակցություն ունեն Գերմանա-հայկական հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից տնտեսության զարգացման նպատակով իրականացվող վարկային ծրագրերում :

Հինգ տարիների կտրվածքով ներկայացնելով ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերում կատարված վարկային ներդրումները, համեմատական մեթոդաբանությամբ վերլուծելով վիճակագրական տվյալների փոփոխությունները համակարգում, ուսումնասիրելով դրանց պատճառահետևանքային հիմնական առանցքները՝ հետազոտությունն ավելի խորն իրականացնելու նպատակով հաջորդիվ անդրադարձ է կատարվում ըստ տնտեսության ճյուղերի՝ վարկավորման և մի շարք ֆինանսատնտեսական ցուցանիշների տնտեսաչափական կապին :

Հաջորդիվ ներկայացվող տնտեսաչափական մոդելները մշակվել են համապատասխան ծրագրային ապահովման (Eviews8) միջոցով՝ օգտագործելով 2010-2014թթ. վիճակագրական բազային տվյալներ : Բոլոր մոդելների խնդրի դրվածքում դիտարկվել է կախյալ փոփոխականների՝ ֆինանսատնտեսական ցուցանիշների վրա վարկավորման ազդեցությունը :

Մակրոտնտեսական գլխավոր ցուցանիշի՝ ՀՆԱ-ի համար տնտեսաչափական ելքային տվյալները ներկայացվում են հաջորդիվ.

Աղյուսակ 6. ՀՆԱ-ի և վարկավորման ծավալների կապի տնտեսաչափական մոդելի ելքային տվյալներ

Կախյալ փոփոխական	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	Է-վիճակագրական	Հավանականություն
ՀՆԱ	Վարկեր	0.746686	0.085833	8.699305	0.0130
	Ազատ անդամ	102304.9	139799.0	0.731800	0.5404
$R^2=0.974$					

Աղյուսակ 6-ի ելքային տվյալները փաստում են, որ մոդելում ներկայացված կախյալ և անկախ փոփոխականների կոռելյացիոն գծային կապում գործակցի նշանակելիությունն էական է, քանի որ վարկերի հաշվարկային գործակիցների դեպքում Ստյուդենտի վիճակագրական է-չափանիշի հավանա-

կանությունը փոքր է 0.05%-ից : Իսկ դետերմինացիայի գործակիցը՝ R^2 -ն, վկայում է այն մասին, որ արդյունքային հատկանիշի՝ ՅՆԱ-ի տատանումը 97.4%-ով պայմանավորված է ռեգրեսիայի մոդելում ընդգրկված գործոնային հատկանիշի՝ վարկավորման ծավալների փոփոխությամբ:

Մոդելի հաշվարկային ցուցանիշները ցույց են տալիս, որ վարկերը 1,000 ՀՀ դրամով ավելացնելու դեպքում ՅՆԱ-ի մեծությունը այլ հավասար պայմաններում կավելանա 746 ՀՀ դրամով :

Տնտեսության մեջ ֆինանսական միջնորդության և ՅՆԱ-ի կոռելյացիոն կապի դեպքում ստացվել է հետևյալ արդյունքները.

Աղյուսակ 7. ՅՆԱ-ի և ֆինանսական միջնորդության կապի տնտեսաչափական մոդելի ելքային տվյալներ

Կախյալ փոփոխական	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	Է-վիճակագրական	Հավանականություն
ՅՆԱ	Վարկեր/ՅՆԱ	70684.95	10060.86	7.025739	0.0000
	Ազատ անդամ	1370823	247872.7	5.530349	0.0001
$R^2=0.792$					

Աղյուսակ 7-ից երևում է մոդելի փոփոխականները վիճակագրորեն նշանակալի են, քանի որ անկախ փոփոխականի՝ վարկեր/ՅՆԱ-ի է-վիճակագրի հավանականությունը փոքր է 0.05%-ից: Այս դեպքում R^2 -ն հավասար է 0.792, ինչը նշանակում է, որ տնտեսության մեջ ֆինանսական միջնորդության փոփոխությունը 79.2%-ով է բնութագրում ՅՆԱ-ի փոփոխությունը:

Մոդելի հաշվարկային արդյունքները ցույց են տալիս, որ վարկերի և ՅՆԱ-ի հարաբերակցության 1%-ով ավելացնելու դեպքում ՅՆԱ-ն, այլ հավասար պայմաններում, կավելանա 70,685 ՀՀ դրամով:

Արդյունաբերության ծավալների և այդ ոլորտում վարկային ներդրումների գծով ստացվում է կապի նշանակելիություն.

Աղյուսակ 8. Արդյունաբերության ճյուղի և դրա վարկավորման ծավալների կապի տնտեսաչափական մոդելի ելքային տվյալներ

Կախյալ փոփոխական	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	Է-վիճակագրական	Հավանականություն
Արդյունաբերություն	Արդյունաբերության ճյուղի վարկավորում	2.064141	0.230870	8.940700	0.0000
	Ազատ անդամ	421503.20	46607.55	9.04	0.0000
$R^2=0.860$					

Ելնելով դետերմինացիայի գործակցից՝ կարելի է նշել, որ արդյունաբերության ծավալների փոփոխությունը 86%-ով պայմանավորված է այդ ոլորտում կատարվող վակային ներդրումներից: Ստացվում է, որ արդյունաբերության ճյուղում վարկավորումը 1,000,000 ՀՀ դրամով ավելացնելու պարագայում ճյուղի ծավալային մեծությունը կավելանա 2,064,141 ՀՀ դրամով :

Վարկավորման կոռելյացիոն կապը նշանակալի է նաև գյուղատնտեսության ոլորտում.

Աղյուսակ 8. Գյուղատնտեսության ճյուղի և դրա վարկավորման ծավալների կապի տնտեսաչափական մոդելի ելքային տվյալներ

Կախյալ փոփոխական	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրական	Հավանականություն
Գյուղատնտեսություն	Գյուղատնտեսության ճյուղի վարկավորում	4.970796	0.52409	9.484615	0.0000
	Ազատ անդամ	392273.8	29654.51	13.22813	0.0000
$R^2=0.874$					

Հաշվարկված մոդելում t-վիճակագրի հավանականությունը կրկին փոքր է 0.05%-ից, ինչը կարևորում է անկախ փոփոխականի նշանակելիությունը, իսկ R^2 -ն 87.4%-ով պայմանավորում է կախյալ փոփոխականի՝ գյուղատնտեսության ճյուղի փոփոխությունը վարկավորմամբ : Արդյունքում վարկավորման ծավալները ոլորտում 1,000,000 ՀՀ դրամով ավելացնելու դեպքում տնտեսության մեջ գյուղատնտեսության ճյուղի հաշվարկային մեծությունը կավելանա 4,970,796 ՀՀ դրամով :

Այլ է պատկերը շինարարության ոլորտում.

Աղյուսակ 9. Շինարարության ճյուղի և դրա վարկավորման ծավալների կապի տնտեսաչափական մոդելի ելքային տվյալներ

Կախյալ փոփոխական	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրական	Հավանականություն
Շինարարություն	Շինարարության ճյուղի վարկավորում	1.799247	1.253269	1.435643	0.1747
	Ազատ անդամ	356912.7	77861.81	4.583925	0.0005
$R^2=0.137$					

Մոդելի ելքային տվյալների համաձայն՝ անկախ փոփոխականի՝ շինարարության ճյուղի վարկավորման մեծության փոփոխության դեպքում t-վիճակագրի հավանականությունը մեծ է 0.05%-ից, ինչը վկայում է, որ մոդելը վիճակագրորեն նշանակալի չէ, այսինքն՝ շինարարության ճյուղի վարկա-

վորմամբ պայմանավորված չէ ճյուղի ծավալների փոփոխությունը. դետերմինացիայի գործակիցը կազմում է 13.7% :

Առևտրի ոլորտում կապի նշանակելիությունն էական է, իսկ արդյունաբերական փոփոխականը՝ առևտրի ծավալների փոփոխությունը 93.2%-ով պայմանավորված է ոլորտում կատարվող վարկային ներդրումների տատանումներից.

Աղյուսակ 10. Առևտրի ճյուղի և դրա վարկավորման ծավալների կապի տնտեսաչափական մոդելի ելքային տվյալներ

Կախյալ փոփոխական	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	Է-վիճակագրական	Հավանականություն
Առևտուր	Առևտրի ճյուղի վարկավորում	4.750674	0.355338	13.36944	0.0000
	Ազատ անդամ	769162.7	67353.76	11.41974	0.0000
$R^2=0.932$					

Աղյուսակ 10-ի տվյալներից ելնելով՝ առևտրի ոլորտում 1 մլն ՀՀ դրամի չափով վարկային պորտֆելը մեծացնելու դեպքում, տնտեսության տվյալ ճյուղի շրջանառությունը դրամական արտահայտությամբ կարող է ավելանալ 4,750,674 ՀՀ դրամով :

Վարկավորման ծավալների և ծառայությունների ոլորտների կոռելյացիոն կապի մոդելը ելքային տվյալները բերվում են հաջորդիվ.

Աղյուսակ 11. Ծառայությունների ոլորտի և դրա վարկավորման ծավալների կապի տնտեսաչափական մոդելի ելքային տվյալներ

Կախյալ փոփոխական	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	Է-վիճակագրական	Հավանականություն
Ծառայություններ	Ծառայությունների ճյուղի վարկավորում	6.16383	0.532097	11.58403	0.0000
	Ազատ անդամ	293601.7	40024.74	7.335506	0.0000
$R^2=0.912$					

Ծառայությունների ոլորտի և այդ ոլորտում վարկային ներդրումների մոդելավորված կապը նշանակալի է, ընդ որում՝ կախյալ փոփոխականի շեղումը 91.2%-ով պայմանավորված է անկախ փոփոխականի շեղումից. եթե ծառայությունների գծով վարկավորումն ավելանա 1 մլն ՀՀ դրամով, ապա այդ ոլորտի ընդհանուր ծավալը դրամական արտահայտությամբ կավելանա 6,163,830 ՀՀ դրամով :

Ներքոնշյալ աղյուսակի տվյալներից երևում է մոդելի փոփոխականի ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի են, քանի որ անկախ փոփոխականի, մասնավորապես վարկերի հաշվարկային գործակիցների Ստյուդենտի գործակցի հավանականությունը փոքր է 0.05%-ից :

Աղյուսակ 12. Տոկոսային եկամուտների և վարկավորման ծավալների կապի տնտեսաչափական մոդելի ելքային տվյալներ

Կախյալ փոփոխական	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրական	Հավանականություն
Տոկոսային եկամուտներ	Վարկեր	0.110493	0.030867	3.579662	0.0034
	Ազատ անդամ	45126734	23251722	1.940791	0.0743
$R^2=0.496$					

Կոռելյացիայի գործակցի քառակուսի աստիճանը հավասար է 0.496, ինչը նշանակում է որ վարկերի փոփոխությունը 49.6%-ով է բնութագրում տոկոսային եկամուտների փոփոխությունը :

Աղյուսակ 2.3.17-ում ամփոփված մոդելի հաշվարկային արդյունքները ցույց են տալիս, որ վարկերը 1000 դրամով ավելացնելու դեպքում տոկոսային եկամուտները, այլ հավասար պայմաններում, կաճեն 110 դրամով:

Հաջորդիվ բերվող աղյուսակում ներկայացվում են մոդելավորված այն խնդրի ելքային արդյունքները, թե որքանով կփոփոխվի առևտրային բանկերի զուտ շահույթի մեծությունը ակտիվների փոփոխության դեպքում.

Աղյուսակ 13. Չուտ շահույթի և ակտիվների կապի տնտեսաչափական մոդելի ելքային տվյալներ

Կախյալ փոփոխական	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրական	Հավանականություն
Չուտ շահույթ	Ակտիվներ	0.012867	0.003258	3.949908	0.0017
	Ազատ անդամ	757473	5137656	0.147436	0.8851
$R^2=0.545$					

Աղյուսակ 13-ի համաձայն` դետերմինացիայի գործակիցը կազմում է 0.545, այսինքն` զուտ շահույթի փոփոխությունը պայմանավորված է ակտիվների փոփոխությամբ 54.5%-ով: Նշանակալի է անկախ փոփոխական արդյունքի ազդեցությունը զուտ շահույթի փոփոխության վրա :

Կոռելյացիոն կապը նկարագրող մոդելի տվյալներից ելնելով՝ կարելի է ամրագրել, որ 1000 ՀՀ դրամով ակտիվներն ավելացնելու դեպքում, առևտրային բանկերը զուտ շահույթը կավելանա 12 ՀՀ դրամով :

Առևտրային բանկերի զուտ շահույթի և ակտիվների կապի մասով ստացված արդյունքները գրավի չեն և վկայում են վատորակ ակտիվների կամ դանադաղ շրջանառվող ակտիվների գոյության մասին :

Վերոնշյալ հանգամանքից ելնելով՝ նպատակահարմար է դիտարկել նաև առևտրային բանկերի ակտիվների շահութաբերության՝ ROA-ի և ընդհանուր ակտիվների տնտեսաչափական կապը.

Աղյուսակ 14. Ակտիվների շահութաբերության և ակտիվների կապի տնտեսաչափական մոդելի ելքային տվյալներ

Կախյալ փոփոխական	Փոփոխականներ	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t-վիճակագրական	Հավանականություն
Ակտիվների շահութաբերություն (ROA)	Ակտիվներ	7.76E-10	9.32E-10	0.833257	0.4197
	Ազատ անդամ	-0.279043	1.469276	-0.189919	0.8523
R ² =0.051					

Ներկայացված Աղյուսակ 14--ում երևում է, որ անկախ փոփոխականի ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի չէ, քանի որ t-վիճակագրի հավանականությունը մեծ է 0.05%-ից : Այդուհանդերձ, մոդելի ելքային արդյունքների վերլուծության հիման վրա, կարևոր է նշել, որ ակտիվների շահութաբերությունն անկախ փոփոխականի շեղումով պայմանավորված չի ավելանում, ինչը խոսում է այն մասին, որ միավոր ակտիվի օգտագործման արդյունավետությունը չի բարձրանում՝ ապահովելու զուտ շահույթի ավելացում :

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև տնտեսաչափական մոդելներով կանխատեսումների հնարավորությունները և կարևորելով տնտեսության մակրո մակարդակում առևտրային բանկերի կողմից ցուցաբերվող վարկային ակտիվությունը՝ պետք է նշել նաև, որ կան գործոններ, որ իրենց ուրույն նշանակությունն ունեն տնտեսության իրական հատվածում վարկային գործընթացի կազմակերպման հարցում, մասնավորապես այն գործոններից հիմնականներն են միջազգային ֆինանսական կառույցների կողմից տրամադրվող վարկային միջոցները և ՀՀ ԿԲ կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը : Վերջինս ուղղակի ազդեցությամբ դրսևորվում է փողի գնի՝ վերաֆինանսավորման տոկոսադրույթի սահմանման դեպքում :

Եթե հարցը քննարկվում է այն տեսանկյունից, որ տնտեսության զարգացման գործում առանցքային է վարկավորման դերը, իսկ դրա համար անհրաժեշտ է ֆինանսական մատչելիության ստեղծում, ապա հակասություն է առաջանում այն հռետորական հարցի շուրջ, թե ինչպես պետք է կարգավորել գները, քանի որ ԿԲ-ն սովորաբար գնաճային պայմաններում բարձրացնում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, իսկ այդ դեպքում բանկերը ստիպված են լինում թանկացնել վարկային ծառայությունները կամ կրճատել վարկավորման ծավալները, ինչն էլ խոչընդոտում է տնտեսության մեջ ֆինանսական միջնորդությանը, որի արդյունքում էլ դանդաղում է տնտեսական աճի տեմպը: Այսինքն՝ եթե գնաճը խորանում է, բարձրանում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, վարկերի տոկոսադրույքները դառնում են ոչ մատչելի, հետևաբար վտանգվում է տնտեսական կայունությունն ու աճը, ուստի այդ իրավիճակում համեմատաբար արդյունավետ լուծումներ են համարվում հետևյալ գործողությունները .

- ԿԲ կողմից զգուշավոր մոտեցում վերաֆինանսավորման տոկոսադրույքի սահմանման հարցում, որը պետք է խիստ համահունչ լինի շուկայի զարգացումներին,
- այն բանկերը, որոնց միջոցների ներգրավման և տեղաբաշխման տոկոսային մարժան մեծ է եղել, պետք է արհեստականորեն չթանկացնեն վարկային միջոցները,
- ֆինանսական հատվածը պետք է ջանք չխնայի հասարակության շրջանակում ֆինանսական գիտելիքների զարգացման գործում, որպեսզի վարկառուները և ավանդատուները իրենց խուճապային որոշումներով չնպաստեն գնաճի խորացմանը :

Զնայած «գնաճ - վերաֆինանսավորման տոկոսադրույք - վարկավորում» տնտեսաֆինանսական շղթայում առկա գործնական դժվարություններին՝ այնուամենայնիվ, միջազգային փորձն ու տեղական տնտեսական կյանքի զարգացումները հավաստում են, որ վարկերը, որպես ճկուն ֆինանսական մեխանիզմ, ապահովում են տնտեսության ճյուղերում կապիտալի հոսքի շրջապտույտ՝ փոխառու կապիտալը վերաբաշխելով տնտեսության առավել շահութաբեր ճյուղերում: Բացի դա, վարկավորումը անհրաժեշտություն է տնտեսավարող սուբյեկտների միջոցների անընդհատ շրջանառության և ապրանքների/ծառայությունների սպառման/մատուցման գործընթացի սպասրկման համար :

Եվ, առհասարակ, վարկն իր գործառնություններով (վերաբաշխում, կանխիկ գործարքների նվազեցում՝ շրջանառության ծախսերի կրճատմամբ, կապիտալի կենտրոնացման և շուկայական տնտեսության կարգավորում) նպաստում է տնտեսության արդյունավետությանը՝ անկանխիկ հաշվարկների մի-

ջոցով կրճատելով շրջանառության ծախսերը, օժանդակելով մրցակցության պահպանմանը, սպասարկելով արտադրական հնարավորությունների ընդլայնմանը և բավարարելով սոցիալ-տնտեսական գործընթացների մասնակիցների տարբեր ժամկետայնություն ունեցող պահանջները :

Արման ՏՈՆԻԿՅԱՆ

ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի վերլուծությունը մակրոտնտեսական ցուցանիշների համատեքստում

Բանալի բառեր. տնտեսական ակտիվություն, վարկային ներդրումներ, տնտեսության ճյուղեր, տնտեսաչափական մոդել

Հիմնավորված է այն, որ առևտրային բանկերը նշանակալի դեր ունեն երկրի տնտեսության զարգացման գործընթացում, և այդ դերը հատկապես կարևորվում է նպատակային վարկային ներդրումների առումով: Սույն հոդվածում ներկայացվում է տնտեսաչափական մոդելավորմամբ առաջարկվում են վարկային ներդրումների արդյունավետ ուղիներ, որոնց դեպքում տնտեսության տարբեր ոլորտներում կգրանցվեն դրական տեղաշարժեր, ինչն էլ կապահովի տնտեսական աճ:

Арман ТОНИКЯН

Анализ кредитного портфеля коммерческих банков РА в контексте макроэкономических показателей

Ключевые слова: экономическая активность, кредитные инвестиции, отрасли хозяйства, эконометрическая модель

Обосновано, что коммерческие банки имеют значимую роль в процессе развития экономики страны, и эта роль особенно важна с точки зрения целевых кредитных инвестиций. В данной статье посредством эконометрического моделирования предлагаются эффективные пути кредитных вложений, в случае которых в различных сферах экономики будут зафиксированы положительные сдвиги, что и обеспечит экономический рост.

Arman TONIKYAN

The analysis of loan portfolio of Armenian commercial banks of in the context of macroeconomic indicators

Key words: economic activeness, loan investments, branches of economy, econometric model

It is a justified belief that commercial banks have a significant role in the process of the development of a country's economy, and this role is especially important in terms of target credit investments. This article offers effective ways for loan investments through the econometric modeling, in which case positive changes will be recorded in various spheres of economy providing for economic growth.